

մից: Վերջինս, Հռոմում պապի առջև իր յարգալիբ խոնարհումը ըստ պատշաճի կոտարելուց եւ երկու եկեղեցիների դաւանական նոյնութեան կամ ձայնակցութեան մասին հաւատարմ տալուց յետոյ, մնացածը թողնում էր առկախ. մնացածի մասին կարելի կը լինէր խօսել միայն այն ժամանակ, երբ իրական յոյսեր կ'երեւային հայկական հարցի համար, Գերմանիայի եւ Լինստատնի այցելութիւններից յետոյ: Եւ, իրօք, Հռոմում Սալմաստեցին ձեռնպահ է մնում Հայ Եկեղեցու անսուսով գիշուամեր անելու կէտում: Նրանից պահանջուել էր ջուր խառնել պատարագի բաժակի մէջ, բայց նա վաղաժամ էր համարել այդ պահանջը՝ ասելով, թէ այդ հարցը պատկանում է բանակցութիւնների հետագայ հանգրուանին: «Եւ սրովհետեւ, — գրում է Արեւտինոսը, — նա պատարագի խորհրդի մէջ ջուր չէր խառնում գինու հետ, համաձայնուելից, որ ինչպէս ինքը, այնպէս եւ իրեն ենթակայ 27 կախկապոսները հետագայում գինու հետ ջուր կը խառնեն՝ ըստ սովորութեան Հռոմէական Եկեղեցու»⁶: Արեւտինոսը յետոյ աւելացնում է. «Բազմաթիւ եւ ծանր կզան մեր միջև վիճարանութիւնները՝ կրօնական հարցերի շուրջ» (plura fuerunt et gravia, quae de religione inter nos disseruimus)⁷: Այս խօսքերի թարգմանութեան հարցում մենք հետեւում ենք Հ. Մ. Չամչեանին, որը ճիշտ է⁸: Պետրովիչը յարմար է համարել մեզմէլ Արեւտինոսի այս խօսքերի իմաստը եւ այդ նպատակով, մերժելով Չամչեանի թարգմանութիւնը, ինքը թարգմանել է այսպէս. «Բազմաթիւ եւ լուրջ կզան մեր խօսակցութիւնները կրօնքի վերաբերեալ հարցերու շուրջ»⁹:

Այս բոլորն ասում են, որ Հռոմում Սալմաստեցին հանդէս էր եկել ո՛չ որպէս անվերապահ եւ միակողմանի գիշուամերով ընթացող բանագնաց: Մեզ թուում է, սակայն, որ Պետրովիչը վերայիշեալ փաստերից իր հանած կզրակացութիւններով համաձայն չէ մեզ հետ: Նա հենց սկզբում ընդունել է, որ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու ծրագիրն է, որ Սալմաստեցուն տարել էր դէպի Եւրոպա. բայց իրերի ընթացքի գնահատման մէջ մոռանում է այդ հիմնականը եւ իր ամբողջ փաստարկումներն ուղղում է այն նպատակին, որ ապացուցի, թէ նա, Սալմաստեցին, անկեղծօրէն եւ անվերապահօրէն անձնատուր էր եղել Հռոմի աթոռին եւ ցմահ անձնուիրար ծառայել նրա պահանջներին ու շահերին: Պետրովիչն իր ընդհանուր կզրակացութիւնների մէջ ասում է, որ Սալմաստեցին «հետեւելով իր փառապանծ նախորդների հետքերուն՝ մեծ բարեպաշտութեան եւ կաթողիկէ ոգիի նշաններ ու վաւերագիրներ տուաւ մինչ հոս կը գանուէր», ինչպէս կ'ըսէր Յուլիոս Գ պապը¹⁰: Ըստ մեզ՝ ամէն հասկացողութիւն յարաբերական է: «Կաթողիկէ (ընդհանրական) ոգիի նշաններ ու վաւերագիրներ (ապացոյցներ)» տալը Հայաստանեայց Եկեղեցու պետի ցուցաբերած քրիստոնէական սիրոյց եւ համերաշխութեան ոգին էր, քրիստոնէական ըմբռնումների ընդհանրութեան ոգու անկեղծ արտայայտութիւնն էր: Իսկ սրանից դուրս արդեօք դեռ ի՞նչ կարող էր հասկանալ Պետրովիչը. անպայման ու միայն հնազանդութիւն եւ հպատակութիւն: Բայց Պետրովիչը դեռ աւելացնում է հետեւեալը. «Ստեփանոս Ե. Լոսանդուն կաթողիկէ մը ըլլալու փաստը տուաւ Հռոմի շրջանակէն դուրսն ալ, այն է Լինստատնի հայոց առջև»¹¹. Իսկ այս խօսքն էլ ակնարկութիւն է Լուսինում ուղարկուած յունարաւան երկու երիտասարդի հետ կապուած մի պատմութեան, բայց այդ էլ, դարձեալ, ուրիշ հարց է. ոչ թէ հասկացողութիւնների յարաբերականութեան հարց, այլ սոսկ թիւրիմացութիւն, եթէ չենք ուզում ասել՝ պատմական փաստերի կամաւոր աղաւաղում:

⁶ S. - E. Assemanus, p. 60.

⁷ Ibidem.

⁸ Հ. Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 518:

⁹ ՊՍՍ էջ 16 եւ 28:

¹⁰ Անդ, էջ 108:

¹¹ Անդ: